Արձանագրություն N3

ՋԿ–ԳՀԱՇՁԲ-19/2-Ն ծածկագրով ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 16 սեպտեմբերի 2019թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Ալեյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մակարյանը և Վ. Սարգսյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ- տնօրեն Ա. Մարտիկյանը,
գլխավոր ճարտարագետ Գ. Ղազարյանը

«ՀԳՇՆ» ՍՊԸ- տնօրեն Վ.Հովասափյանը

«Մոդուլ» ՍՊԸ- տնօրեն Ս. Գասպարյանը

ՋԿ–ԳՀԱՇՁԲ-19/2-Ն ծածկագրով ընթացակարգի բանակցությունների մասին

Օրակարգ՝ Ջրային կոմիտեի կարիքների համար **ՋԿ–ԳՀԱՇՁԲ-19/2-Ն** ծածկագրով ընթացակարգի մասնակցների կողմից ներկայացված գնային առաջարկների շուրջ բանակցությունների վերաբերյալ՝ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետի և հրավերի 7.6 և 7.7 կետերի *(սույն ընթացակարգի գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա)*:

Ելույթ ունեցավ գնահատող հանձնաժողովի նախագահ Կ. Ալեյանը և հրապարակեց մասնակիցների տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկները:

Բանակցությունների արդյունքում մասնակցների առաջարկած գների մասին

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին (16.09.2019թ. ժամը 11:30) ՋԿ–ԳՀԱՇՁԲ-19/2-Ն ծածկագրով մրցույթի մասնակիցներ՝ <<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ-ի, <<ՀԳՇՆ>> ՍՊԸ–ի և <<Մոդուլ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչների կողմից առաջարկած գները՝

Արփի լճի ջրամբարի պատվարի վերականգնման և վերազինման նախագծման աշխատանքների
հազ. ՀՀ դրամ
Չափաբաժին 1
<<ՀԳՇՆ>> ՍՊԸ

Մասնակցի առաջարկած գինը	
29,116.7 /առանց ԱԱՀ/ 5,823.3 /ԱԱՀ/ 34,940.0 /ընդհանուր/	
Մեծավանի ջրամբարի վերականգնման նախագծման աշխատանքների	
Չափաբաժին 2	
<<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ	<<Մոդուլ>> ՍՊԸ
Մասնակցների առաջարկած գները	
7,075.0 /առանց ԱԱՀ/ 1,415.0 /ԱԱՀ/ 8,490.0 /ընդհանուր/	7,083.3 /առանց ԱԱՀ/ 1,416.7 /ԱԱՀ/ 8,500.0 /ընդհանուր/
Արփի լճի ջրամբարի պատվարի վերականգնման և վերազինման նախագծման աշխատանքների	
Չափաբաժին 3	
25,000.0 /առանց ԱԱՀ/ 5,000.0 /ԱԱՀ/ 30,000.0 /ընդհանուր/	

Բանակցությունների արդյունքում հանձնաժողովի որոշման մասին

Հանձնաժողովը որոշեց.

1. **1-ին և 3-րդ չափաբաժինների** 1-ին տեղ զբաղեցրած մասնակից համարել <<ՀԳՇՆ>> ՍՊԸ-ին:
2. **2-րդ չափաբաժնի** 1-ին տեղ զբաղեցրած մասնակից համարել <<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ-ին:
3. **1-ին և 2-րդ չափաբաժինների** 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից համարել <<Մոդուլ>> ՍՊԸ-ին:
4. Հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակիսների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև **ՋԿ–ԳՀԱՇՁԲ-19/2-Ն** ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:
5. 1-ին և 3-րդ չափաբաժինների 1-ին տեղ զբաղեցրած <<ՀԳՇՆ>> ՍՊԸ-ին և 2-րդ չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցրած <<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ-ին առաջարկել՝ *երեք աշխատանքային օրվա ընթացքում* էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ ՋԿ–ԳՀԱՇՁԲ-19/2-Ն ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի վերաբերյալ

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ ---------- Կ. Ալեյան

Անդամներ ---------- Ա. Մակարյան

---------- Վ. Սարգսյան

Քարտուղար ---------- Ա. Սարգսյան